ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արմավիրի մարզի «Վաղարշապատի Ռ. Պատկանյանի անվան հ. 9 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հայոց լեզվի և գրականության (22 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Ձեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք: Փաստաթղթերն ընդունվում են փետրվարի 16-ից մինչև մարտի 1-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա մարտի 3-ին՝ ժամը 14:00-ին, ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատի Ռ. Պատկանյանի անվան հ. 9 հիմնական դպրոցում, հասցեն՝ ք. Վաղարշապատ, Օրջոնիկիձե 27/1:

Տեղեկությունների համար զանգահա ռել՝ (0231) 4-29-66 հեռախոսահամարով:

ՀՀ Արմավիրի մարզի
«Վաղարշապատի Ռ.
Պատկանյանի անվան N9
հիմնական դպրոց» ՊՈԱԿ
հեռ. +374231 4-29-66
ք. Վաղարշապատ
Օրջոնիկիձե27/ 1
էլ. փոստ. patkanyan9@mail.ru

Армавирская область РА
ГНО "Осн. школа N 9
им. Р. Патканяна
г. Вагаршапат"
тел. +374231 4-29-66
г. Вагаршапат
ул. Орджоникидзе27/ 1
эл. почта: patkanyan9@mail.ru

N21
18.02.2022թ.

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Է.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ

Մեծարգո պարոն Մարզպետ

Տեղեկացնում եմ Ձեզ,որ Արմավիրի մարզի << Վաղարշապատի Ռ.Պատկանյանի անվան №9 հիմնական դպրոց >> ՊՈԱԿ-ը հայտարարել է մրցույթ <<Հայոց լեզու և գրականություն>> առարկայի (22 դասաժամ) ուսուցչի թափուր պաշտոնի համար: Կից ուղարկում եմ հայտարարության տեքստը:

ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆ Մ.ՄԱՄՎԵԼՅԱՆ